

Watchdog լրագրություն. հանրային շահերի պահապան շները

Հեղինակ՝ Արմեն Սարգսյան

ՊԱՀԱՊԱՆ ՇՈՒՆ. Բնորոշում, որով հպարտանում են լրագրողները

Վտանգներ զգալու, կասկածելի այցելուներ նկատելու դեպքում պահապան շները աղմուկ են բարձրացնում, փորձում են պաշտպանել իրենց վստահված տարածքը, իմաց են տալիս տերերին: Լրագրության գործառնությունների մեկը բացատրում են շների այս վարքի օրինակով. հանրությանը սպառնացող, վնասող տեղեկությունները հրապարակելով՝ լրագրողները բացահայտում են դավադրություններ, իրազեկում են համընդհանուր կեցության եւ անվտանգության վրա ազդող որոշումների մասին, հետաքննում են գաղտնի գործարքներ, ուշադրության են արժանացնում պաշտոնյաներին վերաբերող տեղեկություններ:

«Պահապան շուն» եզրույթը ամերիկյան է, բայց աշխարհում այսպես են բնութագրում այն լրագրողներին, ովքեր գերադասում են հանրային, հասարակական, մարդկության շահը՝ պետականից եւ ազգային անվտանգությունից: Այս լրագրողներին, բացի պահապան շներից, կոչում են նաեւ «բարոյականության պահապաններ», «հանրության պահակներ», «հասարակության հսկիչներ» եւ այն: Նրանց նաեւ քննադատում են, որ խոսքի ազատությունը վեր են դասում պետական գաղտնիքներից:

Պահապան շան՝ «watchdog» եզրույթին հակառակ գործածվում է նաեւ «lapdog»-ը, բառացի՝ «գոգի շունը» կամ «ձեռնասուն շունը»: Այս անունով հեզնում են այն լրագրողներին, ովքեր «նստած են իշխանության գոգում»: Այսինքն՝ նրանք սպասարկում են պետական պաշտոնյաներին եւ նրանց հետ սերտաձած խոշոր ձեռնարկատերերին:

«Հանրության պահակներն» իրենց գործում հինգ հիմնական հիմնություններ են բանեցնում.

Փաստերի ստուգում

Հետեւում են պաշտոնյաների, պետական, քաղաքական կամ հանրային գործիչների հայտարարություններին եւ գործունեությանը, դրանց վերաբերյալ փաստեր հավաքում, ճշտում, թե որքանով են այդ հայտարարությունները համապատասխանում իրականությանը:

Հատուկ հարցազրույցներ

Օգտագործելով իրենց մասնագիտական հիմնությունները՝ փորձում են պատասխանատուներից պարզել, շատ դեպքերում՝ կորզել տեղեկություններ եւ տվյալներ: Հարցազրույցի կարելուր ժանրը նրանք օգտագործում են խոստովանություններ, անկեղծ պատասխաններ կամ անակնկալ բացահայտումներ ստանալու համար:

Խորհրդապահական գրույցներ

Ստեղծում են իրենց վստահելի, ամուր կապերը տեղեկատվության աղբյուրների հետ եւ, դրանք չբացահայտելու պայմանով, գնում են նյութի հետքերով: Այս դեպքում տեղեկատվության աղբյուրները կարող են լինել ոչ միայն պաշտոնյաները, այլեւ նրանց գործունեությանը, շրջապատին ծանոթ մարդիկ, ովքեր ցանկանում են գաղտնի մնալ: Շնորհիվ հաճախակի հանդիպումների լրագրողն այս դեպքում ձեռքը միշտ պահում է իրադարձությունների «զարկերակի վրա»: Դրա համար ԱՄՆ-ում այն կոչում են նաեւ «զարկերակային լրագրություն (beat journalism)»:

Լրագրողական հետաքննություն

Խորապես ուսումնասիրում են մեկ թեմա կամ դեպք, հավաքում անհրաժեշտ ապացույցներ, գտնում առնչվող մարդկանց, հերոսներ, կատարում ձայնագրություններ, նկարահանումներ, նույնիսկ՝ ձեռք բերում իրեղեն ապացույցներ: Այսօրինակ հետաքննությունները կարող են տարիներ տևել, պահանջում են մեծ ջանքեր, միջոցներ, խիստ կարգապահություն եւ զգուշություն:

Աշխատանք «սուլիչ փչողների» հետ

«Սուլիչ փչողը» անգլերեն whistleblower եզրույթի բառացի թարգմանությունն է: Այսպես են անվանում այն մարդուն, ով իրազեկ լինելով իր աշխատավայրի անօրինությունների, կամ հանրությանը սպառնացող վտանգների մասին՝ գաղտնի համագործակցում է լրագրողի հետ, կիսվում իր նյութերով եւ տեղեկություններով: Նրանք «ներսի» մարդիկ են եւ սովորաբար մեծ ռիսկի են ենթարկում իրենց՝ աշխատանքը, նույնիսկ՝ կյանքը կորցնելու իմաստով: Այս մարդիկ կարող են լինել սպանությունների ականատեսներ, գործարքներ վկաներ, կարող են ունենալ փաստաթղթեր եւ իրեղեն ապացույցներ:

Պատմության ամենացայտուն օրինակներից մեկը, որ բնութագրում է լրագրության watchdog գործառույթը, Ուոթերգեյթի սկանդալն է:



Լուսանկար 1
Գաղտնի նկարահանում. ԱՄՆ նախագահ Ռիչարդ Նիքսոնը եւ նրա աշխատակազմի ղեկավար Բոբ Դալդեմանը տնօրինում են պետական կարեւոր փաստաթղթերի ճակատագիրը:
Լուսանկարը՝ «Վաշինգթոն Փոսթ»

ԱՄՆ, ՈւՈԹԵՐԳԵՅԹ

«պահապան շներ» Վուվարդը և Բերսթայնը մաքրում են ԱՄՆ Սպիտակ տունը


1972 թվականին ԱՄՆ նախագահ Ռիչարդ Նիքսոնը պատրաստվում էր իր վերընտրման քարոզարշավին: Նրա նախընտրական շտաբը դարձել էր երկրի ամենահզոր կառույցներից մեկը եւ ուներ հատուկ ստորաբաժանում, որը տեղավորվել էր մայրաքաղաք Վաշինգթոնի Ուոթերգեյթ կոչվող վարչական շենքերից մեկում (այն հիմա հյուրանոց է): Այստեղ անօրինական գործակալները պահում էին

պետական փաստաթղթեր, գաղտնալսում էին բարձրաստիճան պաշտոնյաներին եւ ԱՄՆ կոնգրեսի անդամներին, իրականացնում էին ֆինանսական գործարքներ: Գաղտնալսումները ԱՄՆ նախագահի գրասենյակից տեղափոխվում էին Ուոթերգեյթ եւ այնտեղ մշակվում:

«Վաշինգտոն Փոսթ» թերթի լրագրողներ Բոբ Վուդվարդը եւ Կարլ Բերնսթայնը այս մասին տեղեկություն էին ստանում իրենց գաղտնի աղբյուրից, ում նրանք կոչում էին «Խոր Կոկորդ»: Երկու լրագրողները իսկական պահապան շների նման հետեւում էին իրադարձություններին, Խոր Կոկորդի նշած կասկածելի պաշտոնյաներին: Լրագրողները իրենց աղբյուրների հետ հանդիպում էին Ռոսլին թաղամասում գտնվող մի ավտոտնակում, խիստ գաղտնի պայմաններում: Իրականում նրանք բացահայտում էին այն, ինչ պետությունը եւ հատուկ ծառայությունները փորձում էին թաքցնել:



Լուսանկար 2
Լրագրողներ Կարլ Բերնսթայնը եւ Բոբ Վուդվարդը վարում են Ուոթերգեյթի հետաքննությունը:
Լուսանկարը՝ «Վաշինգթոն Փոսթ»



Լուսանկար 3
Լրագրողների ուղիվազած սխեման՝
«Ով ում հետ կապ ունի եւ ով ում է ենթարկվում»
Լուսանկարը՝ «Վաշինգթոն Փոսթ»

Վուդվարդի եւ Բերնսթայնի հրապարակումները գրավեցին ամերիկյան հասարակության ուշադրությունը: Լրագրողները, արդեն իսկ իմանալով որոշ գաղտնիքներ, գնում էին մամուլի ասուլիսների եւ պաշտոնյաներին «նեղը զցում» իրենց հարցերով: Օրինակ, նրանք Սպիտակ տան անվտանգության պատասխանատուներին հարցնում էին, թե արդյո՞ք ձայնագրվում են նախագահի հանդիպումները եւ գրույցները: Որտե՞ղ են պահվում պետական գաղտնիք պարունակող թղթերը, եւ ովքեր են դրանք տնօրինում:



Տեսանյութ 1

Ռիչարդ Նիքսոնը ՎՄՆ Կոնգրեսի լսումների եւ հարցաքննության ժամանակ փորձում ապացուցել իր անմեղությունը: Այստեղ նա արտասանում է իր հայտնի խոսքը. «Մարդիկ պետք է իմանան, արդյո՞ք իրենց Նախագահը խաբեբա է, թե ոչ: Ես խաբեբա չեմ (I am not a crook)»:

Հղումը՝ <https://youtu.be/sh163n11J4M?t=26>

Մի քանի այլ հեղինակավոր լրագրեր, օրինակ՝ «Նյու Յորթ Թայմսը», եւս սկսեցին հետաքննել Ուոթերգեյթը: Կասկածները գնալով ավելանում էին: 1972 թվականի հունիսի 17-ին, երբ Սպիտակ Տանը գաղտնի տեղադրված ձայնագրող սարքը եւ ժապավենները փոխում էին, մի պահակ նկատեց զեղծարարաներին եւ աղմուկ բարձրացրեց: Ոստիկանությունը, կարծելով, թե գողություն է

կատարվում, ձերբակալեց այդ մարդկանց: Լուրը պայթեց լրատվամիջոցներում: Կասկածները, որոնք առաջացել էին լրագրողների հոդվածներից, սկսեցին փարատվել: Պարզվեց, որ ձայնագրող սարքը փոխողները անօրինական աշխատող գործակալներն էին: Այսպես բացահայտվեց Ուոթերգեյթի ամբողջ ցանցը: Նախագահ Նիքսոնը սկզբում հրաժարվեց, թե կապ է ունեցել այդ գաղտնալսումների հետ: (Տեսանյութի հղումը այստեղ՝ <https://youtu.be/sh163n11J4M?t=26>):

Մակայն լրագրողները, Կոնգրեսը, ինչպես նաեւ Հետախուզության դաշնային բյուրոն ապացուցեցին նրա կապը Ուոթերգեյթի հետ: Նախագահը, ճիշտ է, վերընտրվեց, բայց կարճ ժամանակ անց, փաստերի ճնշման տակ հրաժարական տվեց: Հրաժարականի համար լուրջ պատճառ էր «Նախագահի բոլոր մարդիկ» վերնագիրը կրող հոդվածների շարքը «Վաշինգթոն Փոսթ» թերթում:



Լուսանկար 4
Վերնագիր՝ «Նիքսոնը հրաժարական տվեց»
Լուսանկարը՝ «Վաշինգթոն Փոսթ»



Լուսանկար 5
«Խոր Կոկորդ» Մայքլ Ֆելփսը՝ աղջկա հետ
Լուսանկարը՝ «Վաշինգթոն Փոսթ»

«Վաշինգթոն Փոսթի» լրագրողներ Վուդվարդն ու Բերնթայնը ստացան ամենահեղինակավոր Պուլիտցերյան մրցանակը: Ավելի քան 40 պաշտոնյա դատապարտվեց տարբեր տարիների ազատազրկման: Լրագրողները այդպես էլ չբացահայտեցին Ուոթերգեյթի իրենց տեղեկատվության աղբյուրին՝ Խոր Կոկորդին: Միայն 2005 թվականին, երբ Խոր Կոկորդը ինքը ցանկացավ դուրս գալ ստվերից, այդ ժամանակ էլ հասարակությունն իմացավ նրա անունը. Մարկ Ֆելթ: Նա Հետախուզության դաշնային բյուրոյի բարձրաստիճան աշխատակից էր, եւ հանուն արդարության դեմ էր գնացել համակարգին ու տեղեկություններ տրամադրել լրագրողներին:

Ո՞րն էր Ուոթերգեյթի ազդեցությունը ամերիկյան հասարակության, և, որոշ իմաստով, համաշխարհային լրագրության վրա:

Հրաժարական տվեց արդեն ընտրված նախագահը, ով խոստովանեց իր սխալը:

Պատասխանատվության ենթարկվեցին նրա տասնյակ մերձավորներ, ովքեր կապ էին ունեցել անօրինական եւ գաղտնի գործարքների հետ:


Լրագրողները դարձան ավելի ինքնավստահ եւ համարձակ: Հետեւեցին նոր բացահայտումներ:

Բազմաթիվ գրքեր եւ ֆիլմեր ստեղծվեցին, որոնք ներկայացրեցին այդ սկանդալի եւ մեծ խարդախության բոլոր մանրամասները:

**ՀԱՅԱՍՏԱՆ, ԹՌՉԿԱՆ
հանրության պահապանները ջրվեժի համար անձնագիր են հանում**

2010 հունիսին Լոռու մարզի Մեծ Պարնի գյուղում ժողով էր: Շինարարական մի կազմակերպություն մոտ տասը գյուղացիների ներկայացնում էր իր ծրագիրը. գյուղին մոտ գտնվող Թռչկանի ջրվեժի տարածքում հիդրոէլեկտրակայան կառուցել, աշխատատեղեր ստեղծել, կասեցնել արթագաղթը: 2011 թվականի սեպտեմբերի 18-ին հետաքննող լրագրողների Hetq.am պարբերականը գրում է.

«Այս լուրը իմանալուց հետո մի խումբ գյուղացիներ, ովքեր անտարբեր չեն իրենց գյուղի, իրենց երեխաների և իրենց ճակատագրով, համախմբվում են, ստորագրահավաք են կազմակերպում և մոտ 100 հոգու անունից 2010 թ-ի հուլիսին նամակ են գրում բնապահպանության նախարարին և վարչապետին: Մի քանի օրից 2 հոգի գալիս են բնապահպանության նախարարությունից, գնում են իբր ջրվեժի տարածքը ուսումնասիրելու: Եվ շատ շուտով սկսվում են ՀԷԿ-ի շինարարության աշխատանքները՝ առանց որևիցե բացատրություն տալու գյուղացիներին»: *(Լուսանկարի հղումը այստեղ՝ <http://hetq.am/arm/print/4800/>):*



Լուսանկար 6
Մեծ Պարևի գյուղացիների նամակը
Լուսանկարը՝ «Չեղ» պարբերական

2011 թվականի սեպտեմբերից հայաստանյան լրատվամիջոցներում հայտնվեցին բնությանը սպառնացող վտանգի մասին լուրեր: Չնայած ՀԷԿ կառուցող ընկերությունը հավաստիացնում էր, որ շինարարությունը ոչ մի տեսակի բացասական ազդեցություն չի ունենալու ո՛չ շրջակա միջավայրի վրա, և ոչ էլ, առավել ևս, Թոչկան ջրվեժի վրա, լրագրողները իրենք են այցելում «ղեպքի» վայր, ճշտում խնդիրը մասնագետներից եւ տեղացիներից, բարձրաձայնում հարցը:

[Թոչկանի ջրվեժի մոտ «ավերիչ» շինարարությունը ետում է](#)

[Բնապահպանության նախարարությունը խախտում է իր օրենսդրությունը](#)

[«Բնություն և թե՛ փող»](#)



Թոչկանի ջրվեժը գտնվում է Շիրակի և Լոռու մարզերի սահմանին, Փամբակ թափվող Չիչխան վտակի վրա: Թոչկանը Հայաստանի գահավիժող ջրվեժներից ամենաբարձրն է՝ 22 մետր: 2008 թվականից Թոչկանը ընդգրկված էր ՀՀ բնության հուշարձանների ցանկում, որպես գեղագիտական առանձնահատուկ արժեք ունեցող ջրագրական

հուշարձան: Այսինքն՝ ջրվեժը պահպանվում էր օրենքով: (Տեսանյութի հղումը այստեղ՝ <https://youtu.be/QZQbsrnnVVk>):

2011 թվականին շրջակա բնակիչները ահազանգեցին, որ տարածքում արդեն տեխնիկա է աշխատում, ինչն ավերածություններ է գործում: Ինչպե՞ս կարող էր օրենքով պահպանվող տարածքում շինարարություն սկսվել: Բնապահպանները եւ լրագրողները սկսեցին բացահայտել Թռչկանի շուրջ հյուսված մի ամբողջ գործարք:

Բնապահպան կազմակերպությունները իրենց վրա վերցրին «ներսի մարդու» գործը: Արագորեն հանրությանը ներկայացվեցին Հայաստանի համապատասխան օրենսդրությունը, ՀԷԿ-ի շինարարության թույլտվությունը ստացած «Ռոբշին» ՍՊԸ-ի տեխնիկական հիմնավորումները, տեղանքի բնապահպանական վերլուծության ծավալուն փաստաթղթերը: Դրանք, ճիշտ է, փակի տակ չէին, ձեռք չէին բերվել գաղտնի ճանապարհներով, բայց ուսումնասիրման համար ժամանակ, հմտություն եւ ջանքեր էին պահանջում: Այդպես մի քանի լրատվամիջոցներ «մասնագիտացան» Թռչկանի հարցում: Վերնագրերից եւ լուսաբանման հաճախականությունից արդեն պարզ էր դառնում, որ հայկական մեդիան Թռչկանի պահպաններին հետեւելով ստանձնել էր «պահպան շան» դերը:

[«Թռչկանի» «պահպանները» հանդիպում կունենան բնապահպանության նախարարությունում](#)

[Ստել և փորձել են հիմարացնել Մեծ Պարնիի բնակիչներին](#)

[Երբ պաշտոնյան դառնում է բնական աղետ](#)



Լուսանկար 7
Բնապահպանների բողոքը. «Թռչկանը ՉԷԿ չի դառնալու»
Լուսանկարը՝ «Արմենիանու»

Բնապահպանները բողոքի ակցիաներ էին կազմակերպում հենց Թռչկանի տարածքում, Լոռու եւ Շիրակի մարզերում, մայրաքաղաքում, «պաշարում էին» կառավարության շենքը: Իրենց հերթին էլ լրագրողները «գրոհում էին» պատասխանատու պաշտոնյաների վրա: Թեև բնապահպանության նախարարն ասել էր, որ ՀԷԿ-ը կշահագործվի գարնան վարար ամիսներին, իսկ ամռանը սեփականատերը ձեռք չի տա ջրվեժին, սակայն բնապահպանները չէին դադարում բողոքելուց: (Լուսանկարի հղումը այստեղ՝ <http://armenianow.com/sites/default/files/img/imagecache/600x400/trchkan-waterfall-armenia-protest.jpg>):

Թռչկանի ջրվեժի տարածքը ճիշտ մեկ հեկտար է: Այս մեկ հեկտարի շուրջ կրթերը բորբոքվեցին այն աստիճան, որ բնապահպանները սկսեցին իրազեկման արշավներ իրականացնել, նստացույցեր կազմակերպել, հանրահավաքներ անել: Ասուլիսներ էին տալիս թե՛ բնապահպանության նախարարությունը, թե՛ ՀԷԿ-ի կառուցմանը դեմ կազմակերպությունները: Հայաստանյան www.lin.am




Տեսանյութ 3
ՀՀ վարչապետը կառավարության նիստում հայտարարում է Թռչկանի հարցով որոշման մասին:
 Գրումը՝ <https://youtu.be/Dq5S2urVzn8?t=12>

լրատվամիջոցը ավելի քան 45 հոդված գրեց, «Հետքը» շուրջ 20 հետաքննություն արեց, Iragir.am-ը 10 հոդված, A1+, Civilnet առցանց լրատվամիջոցները նույնիսկ ուղիղ եթերում հեռարձակեցին իրադարձությունները: 2011 թվականի նոյեմբերի 3-ին Հայաստանի Հանրապետության կառավարության նիստում վարչապետը, անդրադառնալով Թռչկանի խնդրին, հանձնարարեց ջրվեժը հատուկ պահպանվող տարածք դարձնել:

(Տեսանյութի հղումը այստեղ՝ <https://youtu.be/Dq5S2urVzn8?t=12>):

Սա Թռչկանի թնջուկի հանգուցալուծումն էր: «Ռոբշին» ՄՊԸ-ն հայտարարեց, որ դադարեցնում է Թռչկանի ջրվեժի տարածքում, Չիչկան գետի վրա կառուցվող հիդրոէլեկտրակայանի շինարարությունը և տեխնիկան դուրս է բերում տարածքից: Պատմության վերջը, իհարկե, «Հետքի» տարածած այն լուրն էր, որ «Թռչկան ջրվեժ» բնության հուշարձանի անձնագրի նախագիծը արդեն մշակվել է նախարարության կողմից: Ահա այդ մեկ հեկտարի քարտեզը, որը «հանրության պահակների» հսկողության տակ էր հայտնվել: Փաստաթղթի հղումը այստեղ է. <http://hetq.am/static/content/pdf/trchkan.pdf>



Լուսանկար 8
Թռչկանի՝ Բնության հուշարձանի անձնագիրը Փաստաթուղթը՝ «Հետք» պարբերական

Աղբյուրներ

www.wikipedia.org; www.washingtonpost.com; www.ecolur.org; www.econews.am;
www.hetq.am; www.lin.am; www.aravot.am; www.a1plus.am; www.armenianow.com;
www.organize-now.am

Ո՞րն էր Թոշկանի լուսաբանման ազդեցությունը հայաստանյան հասարակության վրա:

- Հստակ որոշում կայացվեց Թոշկանի տարածքում շինարարությունը դադարեցնելու մասին:
- Հայկական առցանց լրատվամիջոցները ցուցաբերեցին հետեւողականություն եւ «զննացին» մի խումբ բնակիչների նամակի հետքերով մինչեւ վերջ:
- Համագործակցեցին բնապահպան ակտիվիստները եւ լրագրողները:
- Թոշկանի լայն լուսաբանումը ցույց տվեց, որ ուժերը համախմբելու դեպքում կարելի հասնել հանրության համար կարեւոր հարցերի վերջնական լուծմանը:

ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Պատմությունը լրագրողների քայլերին համադրելով նշեք հետեւյալ դերերն ու գործառույթները.

Ո՞վ էր Ուոթերգեյթի «Սուլիչ փչողը»:

- Ինչպե՞ս էին հատուկ հարցազրույցներ անցկացնում Բերնսթայնն ու Վուդվարդը:
- Ովքե՞ր էին Թոշկանի «սուլիչ փչողները»:
- Ի՞նչ իրադարձություններ էին օգտագործում լրագրողները Թոշկայի հարցով պատասխանատուներին հարցեր տալու համար: